

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Հայ հին ու նոր մյուս խոշորագույն հեղինակների հետ Սայաթ-Նովայի կյանքն ու ստեղծագործությունը ևս իր անջնջելի հետքերն է թողել հարազատ ժողովրդի անդիր բանահյուսության մեջ: Ինչպես իր ծննդավայր Թիֆլիս քաղաքի, այնպես էլ այլ վայրերի հայերի մոտ նրա մասին ժամանակին հորինվել ու ասվել են բազմաթիվ հետաքրքրական հուշապատումներ, ավանդություններ ու զրույցներ: Պերճախոս են այս տեսակետից ժողովրդական գուսանի հայերեն խաղերի առաջին հրատարակիչ և նրա առաջին կենսագիր ու՝ ստեղծագործության հետազոտող բազմերախտ բանասեր ու բանահավաք Գևորգ Ախվերդյանի հետևյալ գրավոր վկայությունները. «Մեծերուց լսածն ասելով պատմում են», «լսել եմ ծերերուց», «էսպես պատմում են նրա թաղման պատահողներն», «Սայաթ-Նովու տոհմի ավանդութենն ու նրա մասին դարսված զրույցքը ասում են» և այլն¹:

Արձանագրելի է սակայն, որ այդ ավանդություններն ու զրույցները, ժողովրդի մեջ հյուսված նմանօրինակ շատ ուրիշ ստեղծագործությունների պես, ժամանակին դրի շառնվելու պատճառով, համեմատաբար քիչ են հասել մեզ: Ու չնայած դրան, այդ քիչն էլ բավական է, որպեսզի մենք որոշակի պատկերացում կազմենք՝ թե ի՞նչ է մտածել ու զգացել հայ ժողովուրդը սիրո ու արդարության ջատագով իր մեծ երգչի մասին և առհասարակ ի՞նչ տեղեկություններ է ունեցել նա Սայաթ-Նովայի կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ:

1.

Սայաթ-Նովային նվիրված հայկական ժողովրդական հուշապատումների ու ավանդությունների մեջ ամենից առաջ աչքի են ընկնում այն ստեղծագործությունները, ուր խոսվում է բանաստեղծի հուզաթաթալ, պատկերավոր ու իմաստուն խոսքի ներգործուն մեծ ուժի, նրա կատարողական բարձր արվեստի մասին, վեր են հանվում նրա անհատական խառնվածքի բնորոշ դժերը, ցույց է տրվում, թե ինչպես նա երգ՝ ու նվագով կարողացել է դյուրեմել իր բյուրավոր ունկնդիրներին, մրցման մեջ պարտության մատնել իր արվեստակից ախոյաններին:

Պատմում են, որ Հաղպատի վանքում կրոնավոր եղած ժամանակ Սայաթ-Նովան լսում է, որ մի երեւելի օտարական աշուղ է եկել Թիֆլիս՝ տեղի աշուղների հետ մրցելու համար: Մտածելով, որ հայրենի քաղաքի վարպետները հանկարծ կարող են պարտվել, նա, ուշադրություն չդարձնելով ոչ իր վանականի վիճակին, ո՛չ էլ սաստիկ ձմռանն ու ցրտին, Հաղպատից շտապով Թիֆ-

¹ «Սայաթ-Նովա», լույս տեսած աշխատասիրությունով Գևորգ Ախվերդյան, Մոսկվա, 1852, է. թ. 17 և 18:

լիս է գալիս: Այստեղ, հարցուփորձի միջոցով իմանալով զրսեկ աշուղի տեղը, Սայաթ-Նովան Ս. Սարգիս եկեղեցու մոտ մրցման է բռնվում նրա հետ: ...Թիֆլիսում ֆստող Հաղպատի առաջնորդ Դավիթ Լպիսկոպոսը, լսած լինելով վաճական Սայաթ-Նովայի դալսության բուրբ, անմիջապես իր մոտ է կանչել տալիս նրան: Առաջնորդարանում չգտնելով փախած վանականին, Լպիսկոպոսի սպասավորները նրան սկսում են փնտրել քաղաքում: Երկար որոնումներից հետո, վերջապես նրանք Սայաթ-Նովային գտնում են իր հին ընկերների ու բարեկամների շրջանում, աշխարհականի շորերով, կամրջի տակ, սառած Քոի վրա նստած, քամանչաձև ձեռին զրսեկ աշուղի հետ մրցելիս: Ըպիսկոպոսի մարդիկ վրա են հասնում հենց այն ժամանակ, երբ նա արդեն հաղթելու վրա է լինում իր ախոյանին...

Ըստ նույն ավանդության մի ուրիշ տարբերակի, զրսեկ աշուղին հաղթելուց և «քաղքի տղերքի մաշալլաներին» արժանանալուց հետո, Սայաթ-Նովան ետ է դարձնում պարտված արվեստակցի սաղը²:

Բերված ավանդություններից մեր առջև յուրովի հառնում է մի կողմից հայրենի քաղաքի պատվին խորապես նախանձախնդիր, հարազատ ժողովրդի հետ սերտորեն կապված, բնական ու կատարողական գերազանց տվյալներով ուժոված գուսանը, լայնախոհ ու մեծահոգի մարդը, մյուս կողմից՝ տեղագրական, ազգագրական ու հասարակական աջն միջավայրը, ուր ապրել ու ստեղծագործել է նա: Դա, ամենից առաջ, Թիֆլիս քաղաքն է իր Ս. Սարգիս կոչված եկեղեցով, քաղաքի միջով հոսող Կուր գետով, իր «քաղքի տղերքով», ապա՝ աշուղական մրցումները, որոնք այնքան բնորոշ են եղել ժամանակին Մերձավոր արևելքի ու Անդրկովկասի քաղաքների ու գյուղերի, այդ թվում նաև Թիֆլիսի համար: Դա, այնուհետև, Հաղպատի հռչակավոր վանքն է, իր առաջնորդ Դավիթ Լպիսկոպոսով, հավանորեն նույնանուն աջն կրոնավորը, որը 1771 թ. դեկտեմբերի 25-ին նշանակվել է տվյալ վանքի միաբան և մինչև 1795 թ. հիշվել իրրև վերջինիս առաջնորդ³: Դա, վերջապես, ինքը՝ Հաղպատում վանական դարձած Սայաթ-Նովան է, որի մասին, ի թիվս պատմական այլ տվյալների, ակնարկված է նաև բանաստեղծի մի երկտող-ոտանավորի մեջ, հետևյալ ձևով.

Հաղպատի լուսաբար Սայաթ-Նովեն իմ.

Մեկ կանքիդս զլառելու ձեք շունիմ⁴:

Երկու փոքր և աննշան թվացող հուշապատում և իրականությունից վերջված այսքան հավաստի տվյալներ ու ակնարկներ: Այսպես են ընդհանրապես պատմական ատաղձ բնեցող ժողովրդական բոլոր ավանդությունները:

2.

Սայաթ-Նովայի շուրջը հյուսված ժողովրդական բազմաթիվ ավանդությունների ու դրույթների մեջ իր ուրույն անդրադարձումն է գտել բանաստեղծի սիրային դրաման, որի վերաբերյալ ակնարկներ կան նրա ինչպես հայերեն, այնպես էլ վրացերեն ու ադրբեջաներեն խաղերի մեջ: Հիշյալ խաղերից և Սա-

2 Գ. Ախվերդյան, Սայաթ-Նովա, էջ ԺԲ: Գ. Ախվերդյան, Սայաթ-Նովայի շուրջը (տե՛ս «Հովիտ», 1913, № 14, էջ 214—215):

3 «Դիվան հայոց պատմության», գիրք Դ, 1899, էջ 580—582, 588—591, գիրք ԺԱ, 1913, էջ 458:

4 Գ. Ախվերդյան, Սայաթ-Նովա, էջ ԺԹ:

յաթ-Նովային մոտ կանգնած մարդկանցից սերող լուրերից և այդ լուրերի բազմապատկված արձագանքներից ծանոթ լինելով նրա սիրային «զաղտնիքներին», բանահյուս ժողովուրդը թե՛ Թիֆլիսում և թե՛ այլուր իր զրույցներն ու ավանդություններն է ստեղծել այդ առթիվ, բացահայտելով նրանց մեջ հարազատ երգչի կենսագրության համապատասխան դրվագները:

Տվյալ թեմային նվիրված մեզ հայտնի ժողովրդական ստեղծագործություններից առանձնապես ուշագրավ է մի հերիաթ-ավանդություն, որը շնայած տպագրված լինելուն, մինչև հիմա չի արժանացել սայաթնովագետների ուշադրության: Հիշյալ հերիաթ-ավանդությունը կրում է «Սայաթ-Նովա» խորագիրը: Այն գրի է առնվել 1940 թ., ուսուցիչ ու բանահավաք Մուշեղ Հակոբյանի կողմից՝ Լոռվա Ճոճկան գյուղացի անվանի բանասաց 90-ամյա նղսում Մարությանից (նղսում Տատ): Հերիաթի համառոտ բովանդակությունը հետևյալն է.

Թագավորը ուխտի դնալիս աղջկանը թողնում է քաղաքապետի խնամքին: Սա փորձում է տիրաճալ արքայադստերը, սակայն դիմադրության հանդիպելով, նամակով զրպարտում է նրան հոր առաջ: Թագավորը հանձնարարում է որդուն՝ սպանելու քրոջը: Համոզված, որ քույրն անմեղ է, արքայազնը, տանելով նրան անտառ ազատ է արձակում: Հեռվից եկող մարդկանց մի խումբ նկատելով, արքայադուստրը թաքնվում է մոտակա աղբյուրի կողքին եղած ծառի վրա: Նրբ մոտենում է հիշյալ խումբը, պարզվում է, որ թագավորական որսախմբի մարդիկ են, Սայաթ-Նովա անունով պալատական աշուղի հետ միասին: Հանգստանալու համար իջևանում են աղբյուրի մոտ: Սայաթ-Նովան սաղը ձեռքն առնելով սկսում է երգել ու նվագել... «Էն դայդի երբմ ա, որ սարն ու ձորը հետը ձեն են տալիս...»: Աղբյուրից ջուր խմելիս Սայաթ-Նովան ջրի մեջ տեսնում է ծառի վրա թաքնված գեղեցկուհի արքայադստերը և հիացմունքից ուշագնաց է լինում: Աշուղին ուշքի բերելուց հետո, որսախմբի մարդիկ փորձում են համոզել ծառի վրա գտնվող գեղեցկուհուն՝ ցած իջնելու, սակայն նա մնում է անդրդվելի: Միայն Սայաթ-Նովային է, որ հաջողվում է իր կախարհիչ երգ ու նվագով ցած բերել նրան: Թագավորական նազիրը մոտիկից տեսնելով Հրաշք աղջկա գեղեցկությունը, ուղում է խլել նրան Սայաթ-Նովայից: Սակայն թագավորը արգելում է նազիրին այդ անել և գեղեցկուհի աղջկանը կնություն է տալիս իր աշուղին: ...Ժամանակ անց Սայաթ-Նովան, թագավորական նազիրի ուղեկցությամբ՝ կնոջն ուղարկում է հորանց: Նազիրը ճանապարհին փորձում է ձեռք գցել աշուղի կնոջը, բայց չի հաջողվում: Հսելով այդ մասին թագավորը Հարաշար պատժել է տալիս տմարդի ու նենգ նազիրին...⁵:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե Սայաթ-Նովան պատահականորեն է կապված տվյալ հերիաթ-ավանդության հետ, քանի որ վերջինիս սյուժեն, առանց Սայաթ-Նովայի, հայտնի է ոչ միայն հայ, այլև արևելյան ուրիշ ժողովուրդների հերիաթներից: Սակայն, խորամուխ լինելով խնդրի էության մեջ, տեսնում ենք, որ բոլորովին էլ պատահական չէ այն, որ ժողովուրդը սիրած դուստրին կապել է հենց այս և ոչ մեկ ուրիշ հերիաթի հետ: Սայաթ-Նովայի

5 Մ. Հակոբյան, Մի ասացողի կյանքն ու ստեղծագործությունը (տե՛ս Երևանի պալատական համալսարանի «Ուսանողների գիտական աշխատությունների ժողովածու», Երևան, 1940, № 2, էջ 94—102):

կենսագրությանը ծանոթ յուրաքանչյուր ոք կարող է կուսակցին և ընդհանրությանը, որ գոյություն ունի քննության առարկա հեթաթիւ-ավանդության սյու-ժետային հիմնական գծին զուգակից սիրային պատումի և մեր երգչի կենսագրության որոշ գրվագներին հետ:

Հայտնի է, որ Սայաթ-Նովան եղել է վրաց Հերակլ II թագավորի պալատական սիրված երգիչը, որն իր երգ ու նվագով հիացրել է թե՛ թագավորին և թե՛ նրան շրջապատող մարդկանց: Ենթադրություն կա նաև, որ նա սիրահարված է եղել թագավորի քրոջը՝ արքայադուստր զեղեցկուհի Անային (Դատո-նաշվիլի): Սայաթնովագետներից ոմանց կարծիքով՝ պալատական շրջանի որոշ մարդիկ օգտագործելով հիշյալ հանդամանքը՝ խարդավանքներ ու դավեր են նյութել Սայաթ-Նովայի դեմ և զցելով նրան թագավորի աչքից, պատճառ են դարձել, որպեսզի աշուղը վտարվի պալատից⁶:

Քննության առարկա հեթաթիւ-ավանդության մեջ ևս, ինչպես տեսանք, Սայաթ-Նովան պալատական աշուղ է, առանձնապես մոտ՝ անձամբ թագավորին: Անտառում զեղեցկուհի արքայադուստրը հանդիպելով, նա հիանում ու սիրահարվում է վերջինիս և, իր երգ ու նվագով դուրսբերելով նրան, արժանանում փոխադարձ սիրու: Ժողովրդական հեթաթիւ մեջ ևս, ինչպես իրական կյանքում, Սայաթ-Նովան ենթարկվում է պալատականներից ոմանց (իմա՝ նազիրի) խարդավանքներին ու դավերին:

Վերահիշյալ ընդհանրությունների շողի վրա էլ ահա, ըստ երևույթին, ներկա հեթաթիւ-ավանդությունը կապվել է Սայաթ-Նովայի անձնավորության հետ և բանաստեղծի իրական սիրո դրաման, համապատասխան բանահյուսական փոփոխություններ կրելով, ներծուլվել է ժողովրդական հայտնի հեթաթիւ սյուժետային ընդհանուր հյուսվածքի մեջ:

Աննշանակ չէ անշուշտ նաև այն հանգամանքը, որ տվյալ հեթաթիւ, ինչպես այդ վկայել է այն զրի առնող բանահավաք Մուշեղ Հակոբյանը, հորինվել ու պատմվել է Հաղպատի վանքին մերձակա Ճոճկան գյուղում: Հայտնի է, որ Սայաթ-Նովան շուրջ 20—25 տարի իրրե կրոնավոր ապրել է Հաղպատի վանքում: Հայտնի է նաև, որ Ճոճկանը, մոտիկ մի քանի ուրիշ գյուղերի հետ, ժամանակին մտել է Հաղպատի վիճակի մեջ և հարկատու է եղել վերջինիս: Ահա թե որտեղից է սերում, մեր կարծիքով, քննության առարկա հեթաթիւ-ավանդության՝ Սայաթ-Նովայի անձնավորության հետ կապելու հանգամանքը: Տարօրինակ կամ անհավանական չպետք է համարել այն, որ կրոնավոր սրբմիտակ տարիներ շարունակ Հաղպատի վանքում իր կյանքն սնդկացրած երբևմնի համրավավոր դուստնի սիրավեպը կարող էր, այս կամ այն ճանապարհով, դուրս եկած լինել հիշյալ վանքի պատերից, տարածվել նրա շրջակա գյուղերում ապրող բնակչության մեջ և նյութ տալ համապատասխան բանահյուսական ստեղծագործություններին:

Պատահական չէ, հարկավ, և այն հանգամանքը, որ Գևորգ Ախվերդյանը անցյալ դարի 40-ական թվականներին, Սայաթ-Նովայի վերաբերյալ Թեֆլիսում նյութեր հավաքելու հետ մեկտեղ, անհրաժեշտ է գտել այդ ուղղությամբ հետախուզումներ կատարել նաև Հաղպատում: Ահա թե ինչ է դրել նա առաջին իր Սայաթ-Նովայի հայերեն խաղերի ժողովածուին կցած իր հուշակավոր:

⁶ «Սայաթ-Նովա», հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կազմեց՝ Մ. Ս. Հասրաթյան, Երևան, 1959, էջ 304—305:

«Առաջաբանի» մեջ՝ «Սայաթ-Նովու վանական կյանքի վրա շոնիմ ոչինչ տեղեկություն: Հաղպատում մե ծեր էլ չկա, որ իմանում ըլի գոնե մեկ ավանդություն էս աննշան կրոնավորի վրա: Սրա աշխույժ երևակայությունն տրվել է արդյոք մի պտուղ՝ հարմար իր նոր վիճակին, չէ՞ հայտնի: Բե բան էլ ունենա ասած, ո՛վ կու քաշեր հոգսն նրա պահելու համար. նրա անպաճույճ տաղերու «զ» շունեցող (խոսքը պարարի «զ» նախդիրի մասին է—Ա. Ղ.) խոսքերն դուր չէին գալ մեր քերականություն սովորած գիտնական վարդապետներուն: Երևում միայն, որ Թիֆլիզու խաղ սիրող տղերքն վանքումն էլ չեն տրվել դադար իրանց երգչին, ու խստակրոն վարդապետի վեղարի սակն էլ կարծելով իրանց զվարճաշուղի վառվռուն գլուխն, դարսել են զրուց...»⁷:

Գևորգ Ախվերդյանի կատարած հետախուզումների անհետևանք մնալու պատճառը ամենեին էլ այն չպետք է համայնել, որ տվյալ տեղավայրում ընդհանրապես ավանդություններ չեն եղել Սայաթ-Նովայի մասին, այլ այն, որ վաստակավոր բանասերն իր հետախուզումները սահմանափակել է միայն Հաղպատի վանքի պարիսպներով: Բնական է, որ այստեղի հոգևոր հայրերին առանձնապես չէր կարող հետաքրքրել դժբախտ դեպքերի բերումով կուսակրոն դարձած՝ աշխարհիկ կյանքի երգիչ երբեմնի գուսանի ներկան կամ անցյալը, որպեսզի նրանք ավանդություններ «դարսեին» նրա վրա: Այդ բանը կարող էր անել և իրականում արել է վանքի պատերից դուրս գտնվող այն «խալխը», որին ժամանակին «համով դուլուղ» է արել Սայաթ-Նովան՝ սիրտ ու արդարության կոչ անող իր աննման երգերով:

Հաղպատի վիճակի մեջ գտնվող ճոճկան գյուղացի բանասաց վերոհիշյալ Եղսում Տատր, ահա, այդ «խալխի» հարազատ ներկայացուցիչներից մեկն է, նահապետական բարքերին ու հասկացություններին հավատարիմ, «չխոսկան» ու ավանդապահ մի անձնավորություն, որն իր օրում քաղաքի երես չի տեսել: Նրա հավաստիացումով Սայաթ-Նովայի մասին իր պատմած հեքիաթը, որն ինքը, ի շարս շատ ուրիշ հեքիաթների, դրույցների, առակների ու երգերի, լսել ու սովորել է իր «մեծերից», իսկական «ճշտություն» է (եղելություն): «Մեծերը» նրան ասել են, որ ժամանակին ապրելիս է եղել այդ անունով մի հայտնի աշուղ, որը հետո ստիպված է եղել կրոնավոր դառնալ Հաղպատի վանքում⁸:

Մենք ոչ մի հիմք չունենք չհավատալու ժողովրդական ալեպարդ ու պատկառելի բանասացի վկայությանը: Ավելին, մենք պետք է խորապես երասխտապարտ լինենք Եղսում Տատին, որ նա իր հիշողության բանավոր մատյանում դրոշմել ու հարազատորեն մեզ է հասցրել նախնիներից լսած վերոհիշյալ թանկարժեք «ճշտությունը», դրանով իսկ յուրովստան հարստացնելով մեծ բանաստեղծի կենսագրության վերաբերյալ մեր ունեցած սուղ տեղեկությունները:

3.

Նշանակալից են նաև այն բանավոր հուշապատումները, որոնց նյութն են կազմում Հերակլ II-ի պալատում Սայաթ-Նովայի աճեցկացրած տարիների կյանքը, նրա հարաբերությունները պալատական շրջանի մարդկանց և անձամբ իրեն՝ վրաց թագավորի հետ:

Ըստ Թիֆլիսահայերի մեջ պատմված մի ավանդության, Սայաթ-Նովան՝ իբրև լավ քամանչա նվագող և քաղցր ձայնի տեր երգիչ, միշտ զարդարելիս

7 Գ. Ախվերդյան, Սայաթ-Նովա, Լջ ԺԱ—ԺԲ (ընդգծումները մերն են—Ա. Ղ.)

8 Մ. Հակոբյան, Մի ասացողի կյանքն ու ստեղծագործությունը, էջ 97:

է եղել Իրակլէ թագավորի ու սրա մերձավոր-ազգականների ուրախության սեղանները: Մի անգամ էլ, երբ վրաց թագավորը սաստիկ տխրած է լինում և երբ նրա գերդաստանի անդամներն ու իշխանները ոչ մի կերպ չեն կարողանում մխիթարել իրենց տիրոջը, գիմում են պալատական գուստների օղնությանը: Ասում են, թե հենց որ Սայաթ-Նովան քամանչան ձեռին մտնում է թագավորի սենյակը և առանց նայելու նրա թախծոտ դեմքին, համարձակ սկսում է իր երգն ու նվագը, շատ չանցած անցնում է թագավորի տխրությունը և աստիճանաբար խաղաղ խնդություն է դալիս նրա մոայլած դեմքին⁹:

Մի ուրիշ ավանդությամբ հաղորդվում է, որ Սայաթ-Նովան չղիմանալով Հաղպատի վանքի ճնշող մթնոլորտին. վերադառնում է իր հայրենի քաղաքը: Այստեղ նա մի կերպ գլուխ է պահում՝ իրրե անծուխ քահանա՝ սրա-նրա համար գերեզման օրհնելով կամ գաղթական մեռելներ թաղելով: Մեկ-մեկ էլ, երբ նրա միտքն են ընկնում առաջվա ուրախ օրերը, առնում է ձեռքը քամանչան և հին «դոստերի» հետ քեֆի է տալիս իրեն: Այսպես, մի անգամ էլ, երբ Սայաթ-Նովան Իրակլէ թագավորի պալատի տակ, Քոփ ավին քեֆ է աւելիս լինում, նրանց երգ ու աղմուկի ձայնն ընկնում է պալատի պատշգամբում հանգստացող թագավորի ականջը: Տեղեկանալով, որ այդ քեֆիներին մեկն էլ քահանա է, Իրակլէն սաստիկ բարկանում է և մարդ է ուղարկում ներքև, որ հսկողիմանեն ու հեռացնեն նրան: Երբ ծառաները գալիս և հայտնում են Սայաթ-Նովային թագավորի հրամանը, նա տխրորեն շարժում է գլուխը և ասում է. «Աշխարհական էի, արեղան ինչի՞ս էր պետք, արեղա էի, քահանան ինչի՞ս էր պետք...»¹⁰:

Ձեռքի տակ եղած գրավոր վկայությունները հիմնականում հաստատում են վերը բերված ավանդություններում վերարտադրված դեպքերի ու դեմքերի պատմական վավերականությունը: Մենք արդեն նշեցինք, որ Սայաթ-Նովան իր դուստնական արտակարգ ընդունակությունների շնորհիվ ժամանակին դարձել էր վրաց արքունիքի և անձամբ Հերակլ 11-ի պալատական երգիչը, տվյալ գերում բավական երկար ժամանակ մնալով պալատում (մոտավորապես 1744—1759 թթ.): Ուշագրավ է այս տեսակետից բանաստեղծի հետևյալ խոստովանությունը, որ արել է նա իր կյանքի վերջին տարիներին. «Երբ Հերակլ թագավորն ուզեց մեջիս սարքել և երաժիշտներիս այնտեղ տարան, ես այն ժամանակ պարսկական եղանակով վրացերեն երգեցի: Պարոնին այդ շատ դուր եկավ և ինձ խալաթ շնորհվեց: Դրանից հետո շատերը երգեցին ինձ նմանվելով: Ես ամենքի մոտ լավ էի ընդունված ոչ միայն իմ երգով, այլև կատակներով ու այլ աշխարհային բաներով»¹¹:

Հայտնի է նաև, որ Սայաթ-Նովայի կյանքը պալատում հաշտ ու խաղաղ չի անցել: Նա սկզբում գծովել է պալատական շրջաններին մոտ կանգնած ազնվական խավի որոշ ներկայացուցիչների հետ (վախթանգ արքայազն և այլն)¹², իսկ հետո էլ, վերջիններիս նյութած խարդավանքներով, ընդհարվել է նաև Հերակլ թագավորի հետ, որը և հեռացրել է նրան պալատից, ստիպելով,

⁹ Գ. Ախվերգյան, Սայաթ-Նովա, էջ Ը և ԸԹ:

¹⁰ Մ. Արաղի, Մի ավանդություն Սայաթ-Նովայի մասին (տե՛ս «Գրական թերթ», 1936, № 3):

¹¹ «Սայաթ-Նովան Հաղպատում», հատված վրաց իվանե արքայազնի «Կալմասորա» գրքից (տե՛ս «Գրական թերթ», 1936, № 3):

¹² Գ. Աստվածաբյան, Սայաթ-Նովայի անհայտ երգերից (տե՛ս «Ազգագրական հանգես», գիրք X, 1903, էջ 110):

որ նա, հակառակ իր կամքի, բաժանվի սիրեցյալ քամանչայից և դառնա ճգնակյաց կրոնավոր: Այդ մասին թափանցիկ ակնարկներ կան բանաստեղծի մի վրացերեն ոտանավորի մեջ, որ նա հորինել ու ասել է Հաղպատի վանքում կրոնավոր եղած ժամանակ: Ահա մի հատված այդ ոտանավորից.

- Թափավորաց կամփով մեջլիս կանչվողիս,
 • Թավաղներուց միօրվող ու հարգվողիս,
 Կարմիր կապան արք ու փառփով հափաղիս,
 Արիդայի սիվ բուրձը բաժիս կլավ...¹³:

Պատմական միեւնույն դեպքերի ու դեմքերի վերաբերյալ բանավոր ավանդությունների և գրավոր աղբյուրների տվյալների վերահիշյալ զուգադիպությունը, նրանց մեջ առկա բնորոշ սարբերություններով հանդերձ, ինքնին ակրնբախ է: Ավելին չէր էլ կարելի պահանջել ժողովրդական այդ ստեղծագործություններից, որոնք, իրեն լանգիր հուշապատումներ, բերն-բերան և սերնդ-սերունդ անցնելով, չէին կարող չենթարկվել համապատասխան փոփոխությունների:

4.

Իրենց պատմա-ճանաչողական և կենսադրական արժեքով առանձնապես աչքի են ընկնում Սայաթ-Նովայի մահվան շուրջը հյուսված ժողովրդական ավանդությունները: Եթե բանաստեղծի կյանքի մյուս դրվագները վերականգնելու գործում ժողովրդի բանավոր հուշապատումները կատարում են զլխավորապես լրացուցիչ աղբյուրի դեր, քանի որ այդ ուղղությամբ առկա են նաև որոշ գրավոր վկայություններ (ճիշտ է, քիչ և այն էլ մեծ մասամբ անուղղակի), ապա այս դեպքում ավանդությունները, ժամանակակիցների ուղղակի վկայությունների հետ միասին, առայժմ միակ վստահելի և անփոխարինելի աղբյուրներն են:

Ժողովրդական մի ավանդությամբ՝ Սայաթ-Նովան տեսնելով, որ Աղա-Մահմադ խանի զորքերը սկսել են անխնայորեն ավերել իր հայրենի քաղաքը և կոտորել նրա բնակիչներին, վերցնում է իր քամանչան և գնում է խանի մոտ, որպեսզի համոզի նրան դադարեցնելու Թիֆլիսի ավերն ու կոտորածը: Խանի դուռը շահասած, սակայն, նրա սարվաղները, կես ճանապարհին սպանում են բանաստեղծին...¹⁴

Ըստ մի ուրիշ ավանդության (որը մեղանում հայտնի է մի շարք տարբերակներով), երբ Սայաթ-Նովան Հաղպատից Թիֆլիս է գալիս, քաղաքի «տղերքը» նրան մի քանի օրով «ղոնախ» են պահում իրենց մոտ, չթողնելով որ նա շուտով վանք վերադառնա: Հենց այդ միջոցին քաղաքում լուր է տարածվում թե՛ Աղա-Մահմադ խանը մեծ զորքով գալիս է Թիֆլիսի վրա: Սկսվում է փախ-փախը: Շատերի հետ Սայաթ-Նովան էլ է ասպատանում բերդի եկեղեցում՝ հույս ունենալով փրկել իր կյանքը: Սակայն, թշնամու զինվորները շուտով լցվում են եկեղեցին և նկատելով այնտեղ կրոնավորի շորերով Սայաթ-Նովային աղոթք անելիս, պահանջում են իսկույն ևեթ հավատափոխ լինել և դուրս գալ եկեղեցուց: Երգիչը թուրքերեն պատասխանում է նրանց. որ ինքը չի դուրս գա եկեղեցուց և չի ուրանա իր հավատը: Կաղաղած սարվաղները

¹³ Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովա, էջ 129—130:

¹⁴ Լեո, Սայաթ-Նովայի հարցը (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1926, № 2):

տեղն ու տեղը սրախողխող են անում նրան: Երբ Աղա-Մահմադ խանի զորքերը թողնում են Թիֆլիսը և փախած ժողովուրդը վերադառնում է քաղաք, բերդի եկեղեցում սպանվածների մեջ մարդիկ ճանաչում են նաև Սայաթ-Նովայի դիակը ու վերցնելով այն թաղում են նույն եկեղեցու փոքր դռան մոտ¹⁵:

Բերված հուշապատումների մեջ, ինչպես և ընդհանրապես ժողովրդական ավանդություններում, անժխտելի է վիպական-առասպելական որոշ մոտիվների առկայության փաստը: Այդօրինակ մոտիվներից է, մեր կարծիքով, Սայաթ-Նովայի կողմից քամանչան ձեռին Աղա-Մահմադ խանին ընդառաջ գնալու պատմությունը, որը հեռվից-հեռու հիշեցնում է ծերունի արար գորականի՝ Սասունցի Դավթին նույն նպատակով ընդառաջ գնալու վիպական դրվագը: Բացառված է, որ հիշյալ մոտիվը հորինված լինի արևելքում ընդունված և չգրված օրենքի ուժ ունեցող այն սովորության հիման վրա, որով աշուղը կամ բանաստեղծը իրավունք ունենա մուտք գործելու նույնիսկ թագավորի մոտ և ազատորեն հայտնելու նրան իր միտքը, և որի արձագանքն են Սայաթ-Նովայի խաղերից մեկի հետևյալ հայտնի տողերը.

Աշուղի լիզուն բրբուլ է, օրհնեմ ունե, նալար չրկա.

Շահի մոտ խոսկն անց կու կենա, սպանելու ջալլար չրկա¹⁶:

Վիպական բնույթի այս և նման ուրիշ մոտիվների առկայությունը, սակայն, հիմք չի տալիս կասկածի տակ առնելու կամ ժխտելու Սայաթ-Նովայի սպանության շուրջը հյուսված ժողովրդական ավանդությունների մեջ դրսևորված պատմական ճշմարտությունը:

Բանաստեղծի եղևունական մահվանը նվիրված վերոհիշյալ և նման կարգի մի շարք ուրիշ ավանդությունների վավերականությունը առավել ևս ակնհայտ է դառնում, երբ մենք հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ դրանք հիմնականում սերում են դեպքերին ականատես ու մասնակից մարդկանց վկայություններից, որոնց չհավատալու ոչ մի իրավունք չունենք: Ահա թե ինչ է գրել այդ առթիվ Գևորգ Ախվերդյանը. «Թեպետ Սայաթ-Նովու գերեզմանն չունի քար պղծ, բայց էսպես պատմում են նրա քաղման պատահողները» (ընդգրծումը մերն է—Ա. Ղ.)¹⁷:

Մոտավորապես նույնն է վկայել նաև Գևորգ Ասատուրը, գրելով. «Ես հիշում եմ իմ մանկության շրջանից մի ծերունու, որը տեսել և ճանաչում էր Սայաթ-Նովային: Նրա տարիքը հարյուրից անց էր: Դա իմ հոր և ապա իմ սիրած մանցար պապին էր: Մեր ծանոթությունը վերաբերում է անցյալ դարի 70-ական թվականներին... Սայաթ-Նովայի մահվան մասին այսպես էր պատմում Մանցար պապին»¹⁸:

Սայաթ-Նովայի հարազատ որդիներն ու թոռներն էլ չեն հերքել նրա ըստ պանված լինելու փաստը: Դեռ ավելին. նրանցից մեկը՝ Սահանր իր դավթարում հոր խաղերից մեկին («Խալար պնաց բլրույի մող») կցած իր ծանոթության մեջ գրել է հետևյալը. «Այս մուխամբազը Սայաթ-Նովան հորինեց, որ Շահը

¹⁵ Դ. Ախվերդյան, Սայաթ-Նովա, էջ ԺԲ—ԺԳ: Տե՛ս նաև նույն ավանդության Սկանդար-Նովայի բերած տարբերակը («Հովիտ», 1913, № 14, էջ 215):

¹⁶ Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովա, էջ 49:

¹⁷ Դ. Ախվերդյան, Սայաթ-Նովա, էջ ԺԳ:

¹⁸ Դ. Ասատուր, Մի պատահիկ իմ հուշերից (տե՛ս «Գրական թերթ», 1936, № 3: Ընդգծումը մերն է—Ա. Ղ.):

պետք է գա մեծ ժխտրով նրա գերեզմանի վրա: Այս է պատճառը, որ նրան մաս-մաս արին»¹⁹: Այստեղ կարծես մութ կերպով ակնարկվում է բանաստեղծի՝ Շահի (իմա՝ Աղա-Մահմադ խանի) կողմից սպանվելու հանգամանքը:

Վերոհիշյալ բոլոր վկայություններն ու տեղեկությունները գալիս են հաստատելու Սայաթ-Նովայի ողբերգական մահվան մասին վիպող ժողովրդական ավանդությունների կամ հուշապատումների մեջ վերարտադրված գլխավոր դեպքերի ու դեմքերի սլաոմական հավաստիությունը: Այդպիսին է, նախ և առաջ, Աղա-Մահմադ խանի կամ Ախտա խանի՝ Թիֆլիսի վրա կատարած արշավանքի և քաղաքում տեղի ունեցած ավերման ու կոտորածի նկարագրությունը, որը կատարվել է 1795 թ. սեպտեմբեր ամսին և որը վկայված ու հայտնի է համապատասխան պատմական գրավոր աղբյուրներից²⁰: Այդպիսին է, այնուհետև, քաղաքի Մեծ Բերդի Ս. Գևորգ եկեղեցում, բազմաթիվ ուրիշների հետ նաև թշնամու հրոսակների ձեռքով Սայաթ-Նովայի սրախողխող արվելու պատմությունը, որի վկայությունը նույն եկեղեցու հյուսիսային փոքր դռան առաջ գտնվող նրա գերեզմանն է²¹ և որի ճշմարտացիությունը ընդունել են բանաստեղծի կյանքն ու ստեղծագործությունը ուսումնասիրող այնպիսի հմուտ ու հեղինակավոր սայաթնովագետներ, ինչպիսիք են՝ Գևորգ Ախվերդյանը, Հովհաննես Թումանյանը, Գևորգ Ասատուրը և էլի ուրիշներ:

Ամենևին էլ պատահական չէ այն, որ ժողովրդական բոլոր ավանդությունների մեջ իրրև Սայաթ-Նովայի սպանության տեղավայր հիշվում է Ս. Գևորգ եկեղեցին: Եթե այդ ավանդությունները իրեք հնարածին բաներ լինեին, ինչպես ուզում են հավատացնել որոշ բանասերներ, ապա բոլորովին էլ պարտադիր չէր, որ Սայաթ-Նովայի սպանությունը անպայման կապվեր տվյալ եկեղեցու հետ, ուր ժամանակին գտնվելիս է եղել Հաղպատի վանքի առաջնորդարանը, և ուր միտ Հաղպատից Թիֆլիս գալիս ի պաշտոնե այցելել ու իջևանել է Սայաթ-Նովան: Ժողովրդական բանասացները նրան հեշտությամբ կարող էին ասպանել» նաև քաղաքի որևէ այլ վայրում կամ Թիֆլիսի հայկական մի ուրիշ եկեղեցում, քանի որ պատմական աղբյուրներից լավ հայտնի է, որ Աղա-Մահմադ խանի հրոսակների կատարած ասպատակությունները Թիֆլիսում չեն սահմանափակվել միայն Ս. Գևորգ եկեղեցով:

Այսպիսով, իրոք ոչ մի լուրջ հիմք չկա կասկածի տակ առնելու կամ ժխտելու Սայաթ-Նովայի սպանության շուրջը հյուսված ժողովրդական ավանդությունների մեջ դրսևորված պատմական ճշմարտությունը, ինչպես այդ արել են որոշ սայաթնովագետներ, հարկ նվածից ավելի նշանակություն տալով իրենց հայտարարած կասկածելի գրավոր հիշատակություններին և թերագնահատելով բուն ժողովրդական հուշապատումներն ու ավանդությունները²²: Հայտնի է, որ դեռևս V դարում Մովսես Խորենացին հիանալի ըմբռնել և իր հոշակավոր «Հայոց պատմության» մեջ խելամորթն օգտագործել է այդօրինակ բա-

19 «Աղագրական հանգես», գիրք X, 1903, էջ 100:

20 Ղևոն, Հայոց պատմություն, հատ. Գ, Երևան, 1916, էջ 879—885:

21 Потто В., Памятники времен утверждения русского владычества на Кавказе, Тифлис, 1906, вып. I, էջ 72—73:

22 Պրոֆ. Ն. Մելիք-Բեկ, Սայաթ-Նովայի ով լինելը, Թիֆլիս, 1930, էջ 134 (վրացերեն): Գ. Ղևոնիս, Դուսան Սայաթ-Նովան, Թիֆլիս, 1930, էջ 33—46: Պրոֆ. Ն. Մելիք-Բեկ, Նոր նյութեր Սայաթ-Նովայի առասպելական նահատակության շուրջը (տե՛ս «Պրոլետար», 1935, № 189):

Պատկերները՝ բացահայտելով նրանց հիմքում ընկած պատմական ճշմարտություններ: Այդպես են վարվել նաև բոլոր բանիրուն պատմաբաններն ու բանասերները, ինչպես հնում, այնպես էլ նոր ժամանակներում:

5.

Սայաթ-Նովայի շուրջը մեղանում հորինված ժողովրդական ավանդությունների ընդգրկումը չի սահմանափակվում միայն վերը նշված շրջանակներով: Կան ուրիշ ավանդություններ ևս, որոնց մեջ դրսևորված են բանաստեղծի կյանքի այլ դրվագներ: Երևնաք դրանցից երկու օրինակ միայն:

Ըստ ժողովրդական մի հուշապատումի՝ Սայաթ-Նովան փոքր հասակում աշակերտություն է արել ջուլհակի մոտ: Ասում են, թե շատ ընդունակ ու աչքարաց երեխա լինելով, նա կարճ ժամանակամիջոցում ախրան է վարպետանում այդ արհեստի մեջ, որ մի նոր դադգահ է հնարում, որով կտավը փողոցում հինելու փոխարեն, ինչպես այդ ընդունված էր այն ժամանակ, նա սկսում է կտավը հինել ու գործել անշակի մեջ, նստած տեղը²³:

Ըստ մի ուրիշ ավանդության, որ պատմվել է անցյալ դարի 50-ական թվականներին՝ 105 և 115 տարեկան երկու թիֆլիսահայ ծերունիների կողմից (Խարազ Փարսիզ և Էրզեն Օսեփ), Սայաթ-Նովայի կնոջ անունը Մարմար է եղել: Նա ունեցել է շորս դավակ՝ երկու տղա և երկու աղջիկ: Տղաներից մեծի անունը եղել է Մելիքսեթ, փոքրինը՝ Նովան (Օհան), իսկ աղջիկներինը՝ Մարիամ և Սառա: Ասում են նաև, որ նա ունեցել է և մի սիրած աղջիկ՝ Տալիթա անունով, Թիֆլիսի Նորաշենի թաղի լինակիչ ոմն կաթոլիկ Սոլոյի դուստրը, որի մասին բազմաթիվ երգեր է հորինած եղել²⁴:

Սայաթ-Նովայի կյանքի ու ստեղծագործության շուրջը հյուսված մյուս ավանդությունների նման տվյալ ավանդությունները ևս բանաստեղծի վերաբերյալ մեզ հասած ուղարկության արժանի սակավաթիվ կենսագրական վկայություններից են: Դրանցից առաջինի լուսնադարձությունը մասամբ համընկնում է Սայաթ-Նովայի ինքնակենսագրական բնույթի մի խաղի այն տեղեկությանը, ըստ որի նա 12 տարեկան հասակում արհեստի է տրվել և արագորեն տիրապետելով վերջինիս, մեծ հաջողություն է ունեցել տվյալ ասպարեզում²⁵:

Վիպականը կամ ստեղծականն այստեղ ջուլհակի դադգահի կատարելագործման գյուտը մանուկ Աթուլինին վերագրելու հանգամանքն է: Հնազդիտական, վիմակա՛ն և մատենագրական աղբյուրներում առկա համապատասխան տեղեկություններից հայտնի է, որ կտավագործության արհեստի և ջուլհակի դադգահի կատարելագործումը, ինչպես Հայաստանում, այնպես էլ հարևան երկրներում, տեղի է ունեցել տալիսին վաղ միջնադարում²⁶: Այն հանգամանքը, որ ժողովուրդը հիշյալ գյուտը կապել է Սայաթ-Նովայի անվան հետ, վկայում է վերջինիս մեծ ընդունակությունների վերաբերյալ ժողովրդի ունեցած բարձր կարծիքի և սիրած երգչին մի նոր արժանիքով մեծարելու նրա ցանկությունն:

²³ Գ. Ա խ վ ե ղ յ ա ն, Սայաթ-Նովա, էջ 2—է:

²⁴ Գ. Ս կ ա ն դ ա ղ-Ն ո վ ա, Սայաթ-Նովայի շուրջը (տե՛ս «Հովիտ», 1913, № 15, էջ 234):

²⁵ Մ. Հ ա ո ղ ա թ յ ա ն, Սայաթ-Նովա, էջ 205—206:

²⁶ Տե՛ս Բ. Ա ո ա թ ե լ յ ա ն, Քաղաքները և արհեստները Հայաստանում XI—XIII դարերում Երևան, 1958, էջ 268—269:

Ինչ վերաբերում է վերը բերված երկրորդ հուշապատումին, ուր խոսվում է Սայաթ-Նովայի հարազատների ու սիրած աղջկա մասին, ապա վերջինիս տվյալներն էլ, հիմնականում, համընկնում են այն տեղեկություններին, որ առկա են փաստական համապատասխան տեղեկությունների հիման վրա Ախ-վերդյանի կողմից շարադրված բանաստեղծի կենսագրականում²⁷։ Նորությունը տվյալ հուշապատումի մեջ Տալիթայի և սրա հայր կաթողիկ Սողոյի վերաբերյալ եղած հարևանցի ակնարկն է։ Սակայն այդ «նորությունն» էլ, ըստ երևույթին, ունեցել է իր կենսական հիմքերը։ Սայաթ-Նովայի բազմաթիվ սիրային խաղերից դժվար չէ կռահել, որ նա, բացի իր կնոջից, ունեցել է և իր «գողալները»։ Որոշ սայաթնովադետների ենթադրությամբ, խնչպես նշել ենք վերևում, դրանցից մեկը եղել է Հերակլ II թագավորի քույր գեղեցկուհի Աննան²⁸։ Մի ուրիշ «գողալ» էլ, ըստ երևույթին, եղել է հիշյալ Տալիթան։

Ամփոփենք։ Անուրանալի է ընդհանրապես ժողովրդական բանահյուսության և մասնավորապես ավանդությունների պատմա-ճանաչողական (իհարկե նաև գեղարվեստական) արժեքը։ Վերջիններս առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում հատկապես այն դեպքերում, երբ տվյալ առարկայի կամ երևույթի վերաբերյալ իսպառ բացակայում են կամ էլ շատ սուղ են համապատասխան գրավոր վկայություններն ու վավերագրերը։ Իրավացիորեն դիտված է, որ չի կարելի իմանալ աշխատավոր ժողովրդի իսկական պատմությունը, առանց իմանալու ժողովրդական ստեղծագործությունը, քանի որ այդ պատմությունն անցյալում հիմնականում անտեսված է եղել ժամանակի պաշտոնական մատենագրության կողմից²⁹։

Հայ գրականության ու արվեստի լայն ժողովրդականություն վայելող տրիշ խոշոր գեմքերի հետ, հիշյալ մատենագրությունը սառն ու անտնդրեր է գտնվել նաև Սայաթ-Նովայի հանդեպ։ Դրամատիկ դրվագներով հարուստ նրա կյանքը. սիրո ու արդարության ազնիվ գաղափարներով տոգորված նրա սքանչելի ստեղծագործությունը ինչպես հարկն է չի արձանագրվել ու արձագանքվել մեծ բանաստեղծի կենդանության օրով և նրա ողբերգական մահվանից ավելի քան կես դար հետո գրված մեզ հայտնի տարեգրություններում։ Այդ ուղղությամբ եղածը լոկ առանձին կցկտուր ու հակասական տեղեկություններ են։ Խաղով եկած—ախով դնացած, երգով եկած—վերքով դնացած, սիրով եկած—սրով դնացած (Հովհ. Թումանյան) իր սիրելի «նոքարին» չի մոռացել միայն նրա հարազատ «խալխը», իրապատում և վիպախառն շատ ավանդություններ ու զրույցներ ստեղծելով նրա մասին՝ թե՛ կենդանության օրով և թե՛ մահվանից հետո։ Ու եթե այսօր մենք քիչ թե շատ ծանոթ ենք Սայաթ-Նովայի կենսագրությանը, ապա դրանով հիմնականում պարտական ենք նրա մասին ժողովրդի մեջ հյուսված և սերունդների շուրթերով մեզ ավանդված համապատասխան բանավոր հուշապատումներին ու ավանդություններին։

27 Գ. Ախվերդյան, Սայաթ-Նովա, էջ ԺԱ—ԺԲ։

28 Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովա, էջ 219—220։ Տե՛ս նաև՝ Մ. Աղայան, Սայաթ-Նովան և նրա սիրո առեղծվածը («Գրական թերթ», 1940, № 30)։

29 Տե՛ս Մ. Գորկի, Դրական-հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949, էջ 274, 292։

САЯТ-НОВА В АРМЯНСКИХ ПРЕДАНИЯХ

А. Т. ГАНАЛАНЯН

(Р е з ю м е)

Жизнь и деятельность Саят-Новы, как и других крупнейших армянских писателей, оставили свой неизгладимый след в устном творчестве родного народа. Как у земляков поэта, так и в других местностях в свое время бытовало множество преданий, при помощи которых можно заключить, что думал армянский народ о своем великом певце любви и справедливости, как воспринимал творчество Саят-Новы и какие имел сведения о его жизни и деятельности.

В народных сказаниях и преданиях прежде всего говорится о действенной силе страстного, образного и мудрого слова поэта, его высоком исполнительском мастерстве, раскрываются отличительные черты его человеческого характера, показывается, как поэт своей песней и музыкой умел восхищать слушателей, побеждать в творческих состязаниях.

Во многих преданиях нашла своеобразное отражение любовная драма поэта, относительно которой имеются намеки как в его армянских, так и грузинских и азербайджанских песнях.

Примечательны также те устные сказания, предметом которых является жизнь Саят-Новы в годы его пребывания при дворе грузинского царя Ираклия Второго, взаимоотношения поэта с придворными лицами и самим Ираклием.

Своей историко-познавательной и биографической ценностью особенно отличаются народные предания, связанные со смертью Саят-Новы. Если для восстановления других событий жизни поэта устные сказания играют главным образом роль дополнительных источников, то в данном случае предания и прямые устные сообщения современников пока являются единственно достоверными.

Официальные источники того времени проявляли холодное и безразличное отношение к Саят-Нове, как и ко многим крупным деятелям армянской литературы и искусства, пользовавшимся широкой популярностью. Своего любимого поэта не забывал лишь родной народ, создавая о нем множество преданий как при его жизни, так и после смерти. И если мы сегодня более или менее знаем биографию Саят-Новы, то это главным образом благодаря созданным народом и через уста поколений переданным нам преданиям о великом поэте.